

ԲԱՌԵՐԻ ԻՄԱՍՏԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայտնի է, որ լեզվի կառուցվածքային բաղադրիչներից բառապաշարն է ամենից զգայունը հասարակական կյանքում տեղի ունեցող փոփոխությունների նկատմամբ, և երկրում կատարվող սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային, գիտության և տեխնիկայի զարգացման հետ կապված փոփոխությունները առաջին հերթին իրենց արտահայտությունը գտնում են բառապաշարի մեջ:

Բառապաշարի հարստացման ներքին կարևոր միջոցներից մեկը բառիմաստի փոփոխությամբ նոր բառիմաստների առաջ գալն է:

Իմաստափոխությունը (մետասեմիա//Semantic change) լեզվի պատմական զարգացման ընթացքում բառերի իմաստների փոփոխվելն ու նոր իմաստներ ստանալն է:

Իմաստափոխությունը որպես լեզվական երևույթ իր բնույթով պատմական է և ընդգրկում է լեզվի պատմական զարգացման լայն շրջաններ, ուստի անհրաժեշտ է երևույթը դիտարկել տարժամանակյա կտրվածքով:

Իմաստափոխությունը, լինելով իմաստաբանական բարդ, միևնույն ժամանակ հետաքրքիր երևույթ, սերտորեն կապված է բառերի բազմիաստության հետ:

Ժամանակի հոլովույթում բազմիմաստ բառերը իմաստային ամենատարբեր տեղաշարժերի են ենթարկվում, սակայն հիմնականում փոփոխություն են կրում այդ բառերի նախնական կամ բուն իմաստները:

Գրաբարից աշխարհաբարին անցած բառերը կարելի է բաժանել երեք խմբի¹.

ա/ բառեր, որոնց բոլոր նշանակությունները պահպանվել են,

բ/ բառեր, որոնց իմաստներից մեկը կամ մի քանիսը չեն պահպանվել,

գ/ բառեր, որոնց գլխավոր իմաստը չի պահպանվել:

Այսպես՝ *ակն* բառը իր բազմաթիվ նշանակություններով հանդերձ առաջնային ունեցել է *աչք* նշանակությունը, որն այժմ չի պահպանվել:

Երեց նախկինում նշանակում էր *ավագ*, *տարիքով մեծ* և *քահանա* /մեծերին էին ընտրում քահանա²: Այժմ պահպանվել է միայն երկրորդական նշանակությունը /քահանա/:

¹ Տե՛ս Գ. Զահուկյան, Է. Աղայան, Վ. Առաքելյան, Վ. Զոսյան, Հայոց լեզու, 1-ին մաս, Ա պրակ, Եր., 1980, էջ 244-246:

² Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատոր 5-րդ, Եր., 2005, էջ 31:

Գլուխ բառի բազմաթիվ իմաստներից չի պահպանվել *գումար, դրամ* նշանակությունը, *բերան* բառից՝ *հրաման, հորդոր, խոսք* նշանակությունները:

Իմաստափոխությունները բազմապիսի և բազմաբնույթ են, որի պատճառով էլ չափազանց դժվար է դրանք դասդասելն ու դասակարգելը: Բառերի իմաստափոխության օրինաչափության սկզբունքին առաջին անգամ անդրադարձել են Մ. Պոկրովսկին և Ա. Պոտեբնյան, հայ քերականագիտության մեջ՝ Դ. Աճառյանը, Ս. Աբեղյանը, Գ. Ջահուկյանը, Է. Աղայանը, Ա. Մարգարյանը, Ս. Էլոյանը, Պ. Բեդիրյանը և այլք: Այսուհանդերձ իմաստափոխության հետ կապված բազմաթիվ հարցեր մնում են կարոտ ուսումնասիրության:

Բառիմաստի փոփոխություններն առաջանում են մեծ մասամբ բառի փոխաբերական, փոխանվանական և համըմբռնական գործածություններից և անկախ այն բանից, թե սրանցից որն է դեր խաղացել, յուրաքանչյուր իմաստափոխություն ունի իր հիմունքը:

Իմաստափոխությունը բառի բովանդակության, նրա արտահայտած նշանակության փոփոխումն է և ոչ մի կապ չունի բառի արտաքին ձևի փոփոխության հետ: Բառի՝ իմաստափոխության հետևանքով առաջացած նոր իմաստը կոչվում է իմաստափոփոխակ³:

Այսպես՝ *հասնել* բայը գրաբարում եղել է *հասանել, տեսնել-ը՝ տեսանել, սպանել-ը՝ սպանանել*: Փոխվել են վերոհիշյալ բառերի հնչյունական կազմերը, բայց դրանց արտահայտած իմաստները փոփոխություն չեն կրել:

Մինչդեռ շատ բառերի արտաքին ձևը մնացել է նույնը, բայց փոխվել է իմաստը: Օրինակներ՝ *մարդ* նշանակել է *մահկանացու*, հետո, կորցնելով նախնական իմաստը, նշանակել *բանական էակ, հասարակական կենդանի*, ապա և՝ *տղամարդ, ամուսին*:

Դեղծ հնում նշանակել է *դեղին* /այժմ՝ մրգի տեսակ/, *կուռ* նշանակել է *կոր* /այժմ՝ անուր, միասնական/, *խաղալ՝ շարժվել, գնալ* /այժմ՝ խաղ անել/, *խնդրել՝ որոնել* /այժմ՝ ուզել, ցանկանալ/: *Մորթել* գրաբարում նշանակել է *քերթել, մորթը հանել* /այժմ՝ վիզը կտրել, սպանել/: *Ծախել* նշանակել է *ոչնչացնել*, այժմ՝ *վաճառել* /բառիս կողմնակի իմաստների մեջ պահպանվել է հինը. Արամը ծախեց ընկերոջը/:

Աշխատել /աշխատ առնել/ գրաբարում նշանակում էր *հոգնել, նեղություն կրել*, նոր հայերենում դարձել է *գործ անել, պաշտոնավարել* և այլն:

Զգվել /զգուել/ գրաբարում ուներ *կեղծքել, հարստահարել* իմաստները, ապա իմաստափոխվելով դարձել է *նողկալ, գարշել*:

³ Դ. Պետրոսյան, Ս. Գալստյան, Թ. Ղարաբյուլյան, Լեզվաբանական բառարան, Եր., 1975, էջ 119:

Ապրել հմուտ նշանակում էր *փրկվել, ազատվել*, այժմ՝ *բնակվել, կյանք ունենալ* և այլն: *Գրիչ* բառի նախնական իմաստը եղել է *գրող, գրագիր*, հետագայում դարձել է *գրելու գործիք*:

Որոշ բառեր, պահպանելով իրենց ձևը և զխավոր իմաստը, հարստացել են նոր իմաստներով, այսինքն՝ իմաստափոփոխականներ են առաջացել:

Այսպես՝ *թերթ* բառը գրաբարում ուներ *տերև, սաղարթ, թղթի շերտ* իմաստները: Սրանց ավելացել է *լրագիր* իմաստը:

Շտեմարան բառի *ամբար, պահեստ, մթերանոց*, փխր. *գանձարան* իմաստների կողքին առաջացել է *հարցաշարերի ժողովածու* իմաստը /օր./ հայոց լեզվի շտեմարան/:

Վառել բայի *այրել, հրդեհել, խանձել, ոգևորել, ջղայնացնել* իմաստների կողքին առաջացել է *մատնել* իմաստը:

Ցրել բայի *բաժանել, ցանել, սփռել, փշրել, լուծարել, սփռվել, վատնել* իմաստներին ավելացել են *գողանալ, թոցնել և շեղել* /«Ցրեց իրենից, որ հարցին չպատասխանի»/ իմաստները:

Թրջել /թացացնել, խոնավացնել, ոռոգել/ բայը ստացել է նոր իմաստ՝ *շնորհավորել* /«Այսօր նրա նոր պաշտոնն ենք թրջելու»/:

Ճաքել բայի *ճեղքվել, գայլաճալ, սաստիկ լաց լինել* իմաստներին զուգահեռ ի հայտ են եկել նոր իմաստափոփոխականներ՝ 1. *հարբել*, 2. *ցնձալ, սաստիկ ուրախանալ*:

Երիտասարդության շրջանում այսօր սովորական են դարձել *տոժալ և դժժալ* բնածայնական բառերի կիրառումը համապատասխանաբար *պարել, քեֆ անել և ձեռք առնել* իմաստներով, իսկ թուրքերենից փոխառված *դուզ /ուղիղ/ արմատից դգել* բառը ժարգոնում ձեռք է բերել նոր իմաստ՝ *դուր գալ, հավանել* /«Ինձ դգում ա»/:

Լինում է նաև այս երևույթի հակառակը, երբ բառը իր իմաստները ոչ թե ավելացնում է, այլ պակասեցնում:

Գրաբարում *գնացք* բառը նշանակում էր *գնալը, ընթացք, քայլելու տեղ*, այժմ՝ *էլեկտրաքարշով շարժվող վագոնների շարք*:

Առանձին խմբի մեջ են դասակարգվում այն բառերը, որոնց թե ձևը և թե իմաստը լեզվի պատմական զարգացման ընթացքում փոփոխության են ենթարկվել:

Սեպուհական բառից, որում փոխազդեցական հնչյունափոխության հետևանքով *պ* և *հ* հնչյունները միացել և տվել են *փ*, առաջացել է *սեփական* բառը /իին՝ սեպուհին պատկանող իմաստը մթագնել է/:

Ընկեր /ընդ+կեր/ բառն ունեցել է *միասին ուտող, սեղանակից* իմաստները: Յնչյունի կորստի հետևանքով բառի ձևը դեռ գրաբարում դարձել է *ընկեր*,

հիմնական իմաստին զուգահեռ էլ բառն ունեցել է *բարեկամ*, *մերձավոր* իմաստները: Նոր հայերենում այս բառի իմաստային դաշտը ընդլայնվել է՝ *աշխատակից*, *քաղաքացի*: Խորհրդային կարգերի ժամանակ *ընկեր* բառը դարձել է դիմելածն /*товарищ*/, օրինակ՝ ընկեր Հակոբյան, ընկեր նախագահ, ընկեր վաճառող և այլն: Այժմ *ընկեր* բառին փոխարինելու են եկել *պարոն* և *տիկին* բառերը: Դեռ ավելին. *ընկեր* բառը մեր օրերում մեկ այլ իմաստ էլ է ձեռք բերել՝ *սիրած* /«Ընկեր ունե՞ս», այսինքն՝ «Սիրած տղա ունե՞ս»/:

Իմաստափոխությունը սովորաբար տեղի է ունենում ներքևից վերև՝ վերընթաց կերպով, կոնկրետից, մասնավորից դեպի ընդհանուրը, թանձրացականից վերացականը: Շատ դեպքերում բառի փոխաբերական իմաստը հաղթում է նախնական հիմնական իմաստին՝ վերջինիս մոռացության մատնելով: Բերենք մի քանի օրինակներ:

Ձեռնտու / ձեռնատուր / նախնական իմաստը եղել է *ձեռքը տալ* / առևտրի ժամանակ համաձայնության գալիս վաճառողը և գնորդը իրար ձեռք էին տալիս⁴/: Գրաբարում «ձեռն տալ ունեք» նշանակել է *օգնել*, իսկ *ձեռնտու՝ օգնող*: Հետագայում բառը ձեռք է բերել *շահավետ*, *օգտակար* նշանակությունը:

Քրեական բառը ծագում է գրաբարյան *քուրա / քուրայ* / բառից / նշանակել է հնոց, մետաղ հալեցնելու վառարան /՝ *ական* վերջածանցի հավելմամբ: Հնում ծանր հանցագործները իրենց պատիժը կրում էին տաժանակիր աշխատանք կատարելով՝ մետաղ հալեցնելով:

Կառավարել նշանակել է *կառք վարել*, հետագայում նոր՝ *ղեկավարել*, *առաջնորդել*:

Քվե հնում նշանակել է *կախարդական քար*, *խորանարդ*, ապա նոր մեր ժամանակներում դարձել է *ընտրական ծայն*:

Խուժան բառը ծագում է Պարսկաստանի խուժաստան գավառի անունից⁵, որի ժողովուրդը վայրենի էր: Այժմ այն նշանակում է *ամբոխ*, *խաժամուժ* կամ *վատ վարք ունեցող, սրիկա*:

Երկրպագել նշանակել է *երկիրը, հողը համբուրել*, հետագայում՝ *պաշտել*, *աստվածարել*:

Լեզվաբանության մեջ ընդունված է առանձնացնել իմաստափոխության երեք հիմնական տեսակ՝ բառիմաստի ընդլայնում, բառիմաստի նեղացում և բառիմաստի շրջում:

⁴ Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 152-153:

⁵ Տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արձատական բառարան, հատոր 3-րդ, Երևան, էջ 640:

Բառիմաստի ընդլայնումն է կոչվում իմաստափոխական այն երևույթը, երբ բառի իմաստային դաշտը ընդարձակվում, ընդլայնվում է: Բառիմաստի ընդլայնումը կարելի է բաժանել հիմնականում երկու խմբի.

ա/ երբ բառը կոնկրետ իմաստի փոխարեն կամ դրան զուգահեռ ստանում է ավելի ընդգրկուն իմաստ՝ մեծացնելով տվյալ հասկացության ծավալը,

բ/ երբ հատկանունը դառնում է հասարակ անուն:

Նախ անդրադառնանք առաջին տիպին:

Դպրոց բառն առաջացել է *դպիր+ոց* ձևությներից և նախապես նշանակել *գրել-կարդալու տեղ*: Այժմ՝ միջնակարգ ուսումնական հաստատություն, կրթական համակարգ, փորձառություն /կյանքի դպրոց/ և այլն:

Նետել բառը հնում նշանակել է *նետ արձակել*, ապա ծեռք է բերել *զցել, չարտել* իմաստները:

Ջուգել նախկինում ունեցել է *զուգավորել, միավորել* իմաստները, այժմ՝ *պճնել, զարդարել*:

Տուն նշանակել է *կացարան, բնակվելու տեղ*, հետո ավելացել են նոր իմաստներ՝ *շենք, շինություն, կառույց, տնտեսություն* և այլն:

Աթոռ նշանակել և նշանակում է կահույքի մի տեսակ , որի վրա նստում են: *Պաշտոն, իշխանություն* վերացական իմաստները հետագայում են ավելացել:

Բյուր /կարսկական փոխառություն/ հնում նշանակել է տասը հազար, այժմ դարձել է *անթիվ, անսահման*:

Համալսարան բառը մինչև վերջին տարիներս գործածվում էր միայն երևանի պետական համալսարան հաստատությունը անվանելու համար: Այժմ շատ բուհեր վերանվանվել են համալսարաններ, ինչպես՝ Երևանի պետական բժշկական համալսարան, Երևանի պետական մանկավարժական համալսարան, «Հրաչյա Սճառյան» համալսարան և այլն:

Նույնը կարող ենք ասել *ակադեմիա* բառի մասին: ԳԳ գիտությունների ակադեմիայի կողքին գոյացել են Գյուղակադեմիան /նախկին Գյուղիմստիտուտը/, Միլիցիայի ակադեմիան:

Տիկին /տի+կին/ հնում նշանակել է *թագուհի, իշխանուհի, տիրուհի*, այժմ՝ ուղղակի ամուսնացած կին:

Օրիորդ անվանել են իշխանական ծագում ունեցող աղջիկներին: Ներկայումս այն նշանակում է *չամուսնացած աղջիկ* և համարժեք է *կույս* բառին: *Օրիորդ* կոչել են նաև *չամուսնացած ուսուցչուհիներին*:

Ավելացնենք նաև, որ *տիկին* և *օրիորդ* բառերը կիրառելիս հաշվի է առնվում նաև իգական սեռի ներկայացուցչի տարիքը:

Կախել բառի՝ ինչ-որ բանից ամրացնել, կախադան հանել, կախ տալ, խոնարհել իմաստների կողքին այսօր գործածական են չմիանալ, չաշխատել իմաստները /«Համակարգիչը /կամ քջային հեռախոսը/ կախել է»/:

Թռչել /աղավաղված թռնել/ բառի՝ մոտ երեք տասնյակի հասնող իմաստներին զուգահեռ առաջացել է դասից փախչել իմաստը:

Հատուկ անունների հասարակ դառնալը բնորոշ է բոլոր լեզուներին, երբ որևէ հատկանիշով աչքի ընկած մարդու, գիտնականի անունը կամ էլ տեղանունը գործածվում է որպես հասարակ անուն: Այս ճանապարհով են առաջացել շատուշատ գիտաբառեր: Օրինակ՝ բնական գիտություններում օգտագործվում են վոլտ, ամպեր, քուլ, նյութոն, օհմ, հերց և այլ տերմիններ:

Հայտնի է, որ կայսր բառը առաջացել է Յուլիոս Կեսարի անունից /միապետ, ինքնակալ/: Յագո նշանակում է նենգ, դավադիր /Շեքսպիրի «Օթելլո-յից»/, նագար՝ վախկոտ /հայտնի հեքիաթից/, հուդա՝ մատնիչ /Քրիստոս աշակերտ Յուդայի անունից/, կայեն՝ եղբայրասպան, տեր թողիկ՝ տգետ, ծեծով ուսուցանող, մեկենաս՝ հովանավոր և այլն:

Բոլկոտ բառն առաջացել է իռլանդացի մի կալվածատիրոջ անունից, որը հակառակվել է ազգային շարժմանը:

Նիկոտինը ծագել է առաջինը ծխախոտ ներմուծած Նիկոտի անունից:

Բորդո տեղանունից, որտեղ կարմիր գինի են արտադրել, առաջացել է գույնի նոր անվանում՝ մուգ կարմիր նշանակությամբ:

Երկրաշարժից ավերված Ակոռի բնակավայրի անունից առաջացել է ակոռի բառը, որը նշանակում է ավերված:

Բառիմաստի ընդլայնման երևույթի հետ աղերսներ ունի Աճառյանի բառերով ասած «իմաստի բարձրացումը կամ ազնվացումը»:

Մարշալ բառի նախնական նշանակությունը եղել է ծխապան, ապա այն դարձել է զինվորական բարձրագույն կոչման անվանում:

Մարկիզ նշանակել է սահմանապահ, հետո դարձել իշխանական աստիճանի անվանում:

Մինիստր /մինոր-փոքրագույն/ նշանակել է ծառա, ապա՝ ֆրանսիական պալատում աշխատող և, վերջապես, նախարար /այստեղ բառիմաստի շրջում էլ կա/:

Պիոներ բառի նախնական իմաստը եղել է հետևակ, զինվոր, հետագայում այն ձեռք է բերել առաջին անգամ նոր բնագավառ ոտք դրած, ռաիվիրա իմաստները:

* Տես Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հ. I., հատոր 5-րդ, Երևան, 2005թ., էջ 50-51:

Բառիմաստի նեղացումը իմաստափոխական այն երևույթն է, երբ բառի իմաստային դաշտը փոքրանում է:

Բառիմաստի նեղացումը նույնպես կարելի է բաժանել 2 տիպի.

ա/ երբ բառը ծեռք է բերում ավելի նեղ իմաստ՝ կորցնելով հիմնական կամ նախնական իմաստը:

բ/ երբ բառը ծեռք է բերում ավելի նեղ իմաստ՝ պահպանելով իր հիմնական, բուն իմաստը /դժվար չէ նկատել, որ այս դեպքում առկա է նաև իմաստի լայնացում, քանի որ նոր իմաստափոփոխակ է առաջանում/.

Հավ բառը գրաբարում նշանակել է թռչուն /այժմյան *հավքին* համար- ժեք/, ապա դարձել է թռչնի մի տեսակի, այն էլ նրա էզի անվանում:

Երեց բառի *ավագ* իմաստը կորել է. կիրառվում է միայն *քահանա* նշանակությամբ:

Քաջ բառը գրաբարում նշանակել է *լավ, խիզախ, զեղեցիկ, ընտիր* և այլն: Ունենք քաջառողջություն, քաջատեղյակ, քաջ գիտենալ և այլն: Այժմ պահպանվել է միայն *խիզախ, անվեհեր* իմաստը:

Չանգահարել նշանակում էր առհասարակ *զանգ տալ*, այժմ՝ միայն հեռախոսով:

Օթոց բառի *բազմոց, ծածկոց, գորգ, վրան նստելու բարձ, շալ* իմաստ- ներից մնացել են գործածական միայն առաջին երկու իմաստները:

Վերարկու նշանակում էր վրայից զգվող ինչ-որ բան /վերմակ, ծածկոց, քող և այլն/: Այժմ բառն ունի միայն մեկ իմաստ՝ ծննդային տաք վերնագգեստ:

Որոշ բառի *1.պարզ, բացահայտ, որոշակի, 2. առանձին, մի քանի, 3. որևէ, ինչ-որ* իմաստներից առաջինը այլևս՝ չի կիրառվում, ուստի և առկա է բառիմաստի նեղացում:

Ազատվել բառը բառիմաստի նեղացման հետևանքով այժմ գործածվում է մի նոր՝ *ծննդաբերել* իմաստով:

Լաթ բառի *կտոր, կերպաս, զգեստ, քուրջ, անկողին* իմաստներից արևե- լահայերենում գործածական է մնացել միայն *քուրջը*, իսկ արևմտահայերենում *լաթ* նշանակում է *զգեստ*:

Ամուսին բառը ունեցել է 1. ամուսնացած զույգից յուրաքանչյուրը, 2. հասակակից, ժամանակակից իմաստները⁸: Այժմ կիրառվում է *ամուսնական զույգի տղամարդը* իմաստով: Մակայն հետաքրքիր է մի փաստ. հոգնակի թվով գործածվելիս նախնական իմաստը ի հայտ է գալիս: Եթե ասում են «Սիրով ամուսիններ են», հասկացվում է թե կինը, թե տղամարդը:

⁸ Ի դեպ, եթերից հաճախ կարելի է լսել «Այլևս իր դռներն է բացել» և նման արտահայ- տություններ, այսինքն՝ այլևս-ը գործածված արդեն-ի փոխարեն, որը ընդունելի չէ:

⁹ Տե՛ս Ս. Մալխասյան, Հայերեն բացատրական բառարան, հատոր 1-ին, Եր., 2010, էջ 69:

Ամուրի բառը հնում նշանակել է 1. չամուսնացած տղամարդ, 2. ամուսնացած տղամարդ, որի կինը վախճանվել է. այրի⁹: Այժմ *ամուրի* նշանակում է միայն չամուսնացած տղամարդ /թեպետ բառարանում արձանագրված է չափահաս տղամարդ կամ կին, որն ամուսնացած չէ¹⁰: Առկա է բառիմաստի կրկնակի նեղացում:

Այրի նախկինում նշանակել է *ամուսինը մահացած կին*, նաև *կինը մահացած տղամարդ*: Վերջին իմաստը այժմ մթազնել է:

Բառիմաստի նեղացում առկա է նաև *խմելիք* բառում. հասկացվում է միայն *ոգելից խմիչք*:

Լեզվում ջնջվել է *լուրջ* բառի՝ *կապույտ, երկնագույն* իմաստով կիրառությունը:

Որպես բառիմաստի նեղացման երևույթ՝ կարելի է դիտարկել *հոտ* բառի՝ այսօր նովորական դարձած կիրառումը *օծանելիքի հոտ* իմաստով /«Ի՞նչ հոտ ես նախընտրում», որը, իհարկե, փոխանունության արդյունք է:

Բառիմաստի նեղացման տարբեր օրինակների կարելի է հանդիպել գիտաբառերի մեջ, երբ համագործածական բառը դառնում է որևէ գիտության տերմին /օր./ /զգվբ./ ենթակա, լրացում, խնդիր, կապ, հող, կարգ, սեռ և այլն/:

Ինչպես հատուկ անուններն են դառնում հասարակ, այնպես էլ սովորական է հասարակ անունների անցումը հատկանունների: Այս դեպքում ևս արձանագրվում է բառիմաստի նեղացում:

Օրինակներ՝ հասմիկ-Յասմիկ, շուշան-Շուշան, մանուշակ-Մանուշակ, Եվեր-Եվեր, ռազմիկ-Ռազմիկ, համեստ-Յամեստ, գոհար-Գոհար, ջերմուկ-Ջերմուկ, բերդ-Բերդ, կեչուտ-Կեչուտ, տանձուտ-Տանձուտ, աշտարակ-Աշտարակ, գետափ-Գետափ, անտառամեջ-Անտառամեջ և այլն:

Բառիմաստի շրջումը իմաստափոխական այն երևույթն է, երբ բառի նախնական իմաստի փոխարեն առաջանում է հակառակ իմաստը: Այստեղ արդեն իմաստափոխությունը լիակատար է և տեղի է ունենում բացարձակ ձևով:

Այսպես՝ *դեղ* բառից առաջացել է *դեղել /թունավորել/* բառը, *պարապ /անգործ/,* բառից ունենք *պարապել /մի բանով զբաղվել/* բառը: Նախկինում *ահագին* բառը նշանակում էր *ահեղ, սոսկալի*, այժմ նրա նշանակությունն է *մեծ, հսկայական*:

Մեղք /հանցանք/ բառը նոր հայերենում ձեռք է բերել նաև *խղճմտանք, գութ* իմաստները /«Մեղք է երեխան, մի նեղացրու»/:

⁹ Ն.տ.:

¹⁰ Տես ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, 1-ին հատոր, Եր., 1969թ., էջ 61:

Բառիմաստի շրջման բազմաթիվ օրինակներ են հանդիպում առօրյա-
խոսակցական լեզվում: Հաճախ ենք լսում ախավոր գեղեգիկ է, ախավոր սիրում
է և նման արտահայտություններ /դրական իմաստով, ախավորը՝ յափազանց
փոխարեն/:

Իսկ վերջ, մահ, թույն բառերը գերազանց, չքնաղ, կատարյալ իմաստնե-
րով մտել են շրջանառության մեջ մանավանդ երիտասարդության բառապաշա-
րում /նա վերջն է, մահ է, թույն մեքենա և այլն, և այլն/:

Բառիմաստի նեղացումը որոշ դեպքերում տեղի է ունենում թյուր-
ըմբռնման հետևանքով:

Մեղանչել /մեղք գործել/ բառը այսօր շատ շատերը օգտագործում են
մեղա գալ, գղջալ իմաստով, խթանել /օգնել, նպաստել/ բառը՝ խանգարել
իմաստով, հակամետ /տրամադիր, միտված/ ընդդեմ՝ որպես հակոտնյա, հակա-
դիր:

Իհարկե, նման կիրառությունները մերժելի են և հետևանք անգիտու-
թյան:

Զգիտես ինչու մեր օրերում դիմություն և ընդդիմություն բառերը օգտա-
գործվում են որպես հակադիմություն, միմյնեք երկուսն էլ ունեն նույն իմաստը
/դեմ+ություն=ընդդեմ+ություն/, այսինքն՝ դիմությունն էլ ընդդիմություն է: Ուստի
առկա է բառիմաստի բնեռացում, որը ճիշտ չէ:

Որոշ դեպքերում բառիմաստը շրջվում է ածանցման հետևանքով:
Օրինակ՝ իմաստակ /իմաստ+ակ/ նշանակում է թերուս, տգետ: գրչակ
/գրիչ+ակ/՝ վատ գրող, անտաղանդ բանաստեղծ: պանրիկ նշանակում է ոչ թե
փոքրիկ պանիր, այլ չամիչով կամ որևէ միջուկով կաթնաշոռ, աղյուսակ ասելով
հասկանում ենք ոչ թե փոքր աղյուս, այլ վանդակավոր փոքր գծվածք՝ նրա մեջ
որևէ բան գրելու կամ այլ նպատակների համար:

Բառերի իմաստափոխությունն արտացոլում է բառապաշարում տեղի
ունեցող իմաստային տեղաշարժերը, որոնք կատարվում են օրինաչափորեն:
Լինելով բավական բարդ երևույթ՝ հաճախ դժվար է լինում պարզել իմաստա-
փոխության տեսակը, քանի որ շատ բառիմաստներ ոչ թե ուղղակիորեն ընդ-
լայնվում կամ նեղացվում են, այլ տեղի է ունենում երկուսը միաժամանակ, կամ
էլ դրանք փոխհաջորդում են իրար՝ բառիմաստի փոփոխությունը տանելով
տեղատվությունների ճանապարհով: